


---

ԵԶԱԿԻ ՄԻՋՆԱԴԱՐԱԳԵՏԸ  
(Ասատուր Մնացականյանի 100-ամյա հոբելյանին)

Ասատուր Մնացականյանն իր աշխատություններով խոր հետք է թողել միջնադարյան գրականության հետազոտության կարևորագույն բնագավառում: Նա ստեղծել է իր դպրոցը՝ մի կարևոր առաքելություն, որը տրվում է քչերին: Նրա սաները ևս երևելի դեր են կատարել, և ոմանք, բարեբախտաբար, շարունակում են



աշխատել հայ միջնադարի ուսումնասիրության բնագավառում: Ա. Մնացականյանի պատրաստած գիտական կադրերից են Փայլակ Անթաբյանը, Արտաշես Մաթևոսյանը, Հասմիկ Մինոնյանը, Հրաչյա Թամրազյանը, Էլեոնորա Հարությունյանը, Արմինե Քյոչկերյանը և ուրիշներ: Ես էլ եմ բախտ ունեցել լինելու նրա ասպիրանտը և «Ներսես Մոկացի» թեկնածուական ատենախոսությունը պաշտպանել եմ նրա ղեկավարությամբ: Ա. Մնացականյանը պահանջկոտ ղեկավար էր և տանել չէր կարողանում ծուլ աշակերտին: Նրա համար բանասիրությունը ապրելու հիմնական ձևն էր, և թվում էր, թե օրվա 24 ժամերին էլ նա աշխատում է:

Դժվար կյանքի ուղի է ունեցել Ա. Մնացականյանը: Ծնվել է Աշտարակի շրջանի Ոսկեվազ գյուղում. նրա հայրը՝ Շմավոնը, եղել է գյուղի ամենահարուստ մարդը, ինքն էլ՝ նրա միակ և ցանկալի որդին: Ընտանիքին բաժին էր ընկել կուլակափության աղետը, որին հաջորդել էր ազնիվ աշխատավոր գյուղացուն Սիրբի և դեպի անհայտ մահ գնալու դժոխքը:

Ա. Մնացականյանը միջնակարգ կրթությունը ստացել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում, որտեղ էլ սկսվել է նրա ներքին մեծ կապը հայ ժողովրդի պատմության, գրաբարի, հայ միջնադարյան մատենագրության հետ: Բանասերի փայլուն տվյալներ ունեցող երիտասարդին վիճակված չէր Երևանում կրթությունը շարունակելու բանասիրության ուղղությամբ և ընդունվել է Թբիլիսիի գյուղատնտեսական ինստիտուտը, որն ավարտվել է 1939-ին: 1940-ից 1983-ը՝ մինչև իր կյանքի ավարտը, Ա. Մնացականյանն աշխատել է Մաշտոցի անվան Մատենադարանում՝ դառնալով նրա սյուններից մեկը: 1942-45-ին նա մասնակցել է Երկրորդ համաշխարհային պատերազմին. Կերչի մասղացում գերի է ընկել, որոշ ժամանակ գեհեճական օրեր է անցկացրել Ռուսիայի Տիմիշոարա համակենտրոնացման ճամբարում, ու երբ խորհրդային զորքերն ազատագրել են այդ երկիրը՝ Ֆաշիզմից, վերադարձել է գործող բանակ ու կռվել «շտուրմավոյ» գնդում, որի զինվորներից կենդանի էին մնում 10-ից մեկը:

Պատերազմից վերադառնալով՝ Մնացականյանը մի առանձին եռանդով է ձեռնամուխ եղել Մատենադարանում կատարած գիտական աշխատանքներին: 1958-ին «Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր» թեմայով թեկնածուական ատենախոսության համար ստացել է բանասիրության գծով գիտական կոչում, իսկ 1964-ին «Հայկական զարդարվեստ» թեմայով պաշտպանել է և ստացել պատմական գիտությունների դոկտորի աստիճան:

1956-ին լույս տեսած «Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր» գիրքն ամբողջովին նորություն էր: Ա. Մնացականյանը, որը բացառիկ հմուտ ձեռագրագետ էր, հայ միջնադարյան գրչագիր մատյաններում հաճախ էր հանդիպել բանահյուսական երգեր, որոնք զանազան գրիչների ձեռքով ներմուծվել էին հայկական ձեռագրեր, և դրանք հարկավոր էր դարձնել հայ բանագիտության սեփականությունը: Դրանց մի մասն իրենց տարբերակներն ունեին Գ. Շերենցի «Վանա սագում», «Էմինյան ազգագրական ժողովածուում», Հ. Ճանիկյանի «Հնութիւնք Ակնայ» գրքում, «Բիւրակնում», Ա. Տեկանցի «Հայերգում», «Ազգագրական հանդեսում» և այլուր, սակայն չկային այդ հյուսվածքների քննական բնագրերը: Ահա այդ շնորհակալ գործն իրականացրեց Ա. Մնացականյանը:

1955-ին ՀՍՍՌ գիտությունների ակադեմիայի Արվեստների պատմության և տեսության սեկտորը հրատարակում է Ա. Մնացականյանի «Հայկական զարդարվեստ: Հիմնական մոտիվների ծագումն ու գաղափարական բովանդակությունը» կոթողային աշխատությունը (659 էջ): Տեսական խոր ընդհանրացումներ ունեցող այս հետազոտությունը հիացմունք է պատճառում իր քննական տեսադաշտի արտակարգ լայնությամբ: Դրա վկայությունն են նաև աշխարհի տարբեր ժողովուրդների զարդարվեստներից բերված նկարների գուգահեռները: Օգտագործված 1150 նկարների հիմնական մասն առնված է հայկական միջնադարյան մանրանկարչությունից: Հաշվի են առնված նաև բարելակյան, ասորական, եգիպտական, խեթական, ուրարտական, պարսկական, հունական, չինական, հնդկական, սկյութական, հռոմեական, արաբական, վրացական, ռուսական, լեհական, նորգելանդական, ամերիկյան հնդկացիների և այլ ժողովուրդների զարդանկարներ: Գիտնականը ճշտորեն բացահայտել է հայկական զարդարվեստի հնագույն արմատները, որոնք ժամանակի ընթացքում այնքան են հեռացել նյութական հիմքից և իրենց նախնական նշանակությունից, որ այսօր գրեթե անհնար է դրանք հասկանալը: Նա գտել է հայկական զարդարվեստի գաղտնիքները բացելու բանալիները և մատնացույց է արել հայկական զարդարվեստի ու այլ ժողովուրդների համանման արվեստի փոխկապերը, որը պայմանավորված է մարդկության անցած համընդհանուր ճանապարհի՝ նախնական աստիճանից, դիցաբանական պատկերացումներից մինչև միաստվածության գաղափարին հանգելը:

Ա. Մնացականյանը մեծ հայրենասեր էր և անհաշտ էր հայ ժողովրդի պատմությունն ու մատենագրությունը նենգող աղբյուրների գիտնականների նկատմամբ: Նա այդ խնդրում ուներ իր համակիրների մի խումբ, որի մեջ մտնում էին Պարույր Սևակը, Բագրատ Ուլուբաբյանը, Զորի Բալայանը, Լևոն Խաչիկյանը, Վարդգես Միքայելյանը, Լենդրուշ Խուրշուդյանը:

1966-ին լույս է տեսել Ա. Մնացականյանի «Աղվանից աշխարհի գրականության հարցերի շուրջ» մեծարժեք աշխատությունը, որը 1969-ին Մատենադարանը հրատարակում է ռուսերենով՝ «О литературе Кавказской Албании» խորագրով: Այսօր էլ այս աշխատությունը շարունակում է մնալ արդիական ու հրատապ: Բազմաթիվ փաստերով Մնացականյանն ապացուցում է, որ Աղվանք երկրի նահանգներից Ուտիքը, Արցախը, Գարդմանը արհեստականորեն պարսից պետության կողմից անջատվել են Մեծ Հայքից ու միացվել Աղվանքին, սակայն այդ նահանգներն իրենց բնիկ հայ բնակչությամբ այնքան հայկական նկարագիր ունենին, որ հայոց այբուբենը ողջ Աղվանքի համար դառնում է պետական պաշտոնական և հայերենն էլ դառնում է այդ երկրի լեզուն: Տեղին է հիշել ֆրանսիացի հայագետ Մարի Ֆելիսիտե Բրոսսեի՝ հայ դրամներին նվիրված աշխատությունը (տե՛ս M. Brosset, Monographie des monnaies Arméniennes, SPb., 1839), որում նա ոչ միայն համաձայն է հայ պատմիչների հետ, թե Աղվանքի թագավորներն ունեցել են հայկական ծագում (էջ 34), այլև բերում է Աղվանքի թագավոր Գորիկի պղնձե դրամի նկարը, որի երկու կողմում էլ գրված է հայերեն ու մաշտոցյան այբուբենով:

Ա. Մնացականյանը հրատարակել է հայ միջնադարի նշանավոր բանաստեղծներ Նաղաշ Հովնաթանի, Պաղտասար Դպիրի (հեղինակակից՝ Շ. Նազարյան) և Գրիգոր Տղայի գրական ժառանգության քննական բնագրերը՝ համապատասխան հետազոտությամբ և հմուտ ծանոթագրություններով: Գրիգոր Տղային նվիրված գրքում Մնացականյանը փաստերով հիմնավորում է, որ նա Ներսես Շնորհալու օրինակով մեծապես նպաստել է Կիլիկյան Հայաստանի մատենագրության զարգացմանը: Շատ ուշագրավ են ներկայացված Գրիգոր Տղա կաթողիկոսի ու մատենագրի բազմազան կապերը բյուզանդական գործիչների, Հռոմի պապերի, Սալահադդինի, Մեծ Հայքի կրթական կարևոր կենտրոնների՝ Հաղբատ-Սանահինի վանքերի վարդապետների հետ:

1980-ին լույս է տեսել Ա. Մնացականյանի «Հայ միջնադարյան հանելուկներ» աշխատությունը, որն ընդգրկում է V-XVIII դարերի, այսինքն՝ ողջ միջնադարի տարբեր հեղինակների ստեղծած գրական հարուստ ժառանգությունն այդ ժանրում: Այս գրքում նա քննական բնագրերը կազմվել են ըստ ձեռագրական ու տպագիր աղբյուրների համեմատության: Բանասերը նկատում է. «Ժողովրդական հանելուկների նման, գրավոր հանելուկներն էլ բնութագրվում են այլաբանությունների և փոխաբերական պատկերների առատությամբ: Որպես կանոն, հանելուկավորվող իրը կամ հասկացությունը ներկայացվում է մի ուրիշի հատկանիշներով կամ տեսքով: Դրանով փաստորեն թեմաները կրկնապատկվում, բազմապատկվում են, և գրական աշխարհ են թափանցում կյանքի, բնության ու երևակայության նորանոր կողմեր» (էջ 13): Բնականաբար, հայ հանելուկագրության դասական շրջանը նշանավորում է Ներսես Շնորհալին, որը «տեսարան առ տեսարան հանելուկների մեջ խտացրել է բանաստեղծին շրջապատող աշխարհն ու բնությունը, կյանքն ու առօրյան» (էջ 75):

Ա. Մնացականյանը հայ միջնակարգ դպրոցի VIII դասարանի համար կազմել է շատ օրինակելի քրեստոմատիա (1970), որն ընդգրկում է հայ հին և միջնադարյան

գրականությունը՝ սկզբից մինչև Մայաթ-Նովա, նաև հայ նոր գրականությունը՝ Հարություն Ալամդարյանից մինչև Հակոբ Պարոնյան: Քրեստոմաստիայի հեղինակը դիմել է հետաքրքիր նորարարության. հայոց հին վեպի հատվածները՝ «Հայկ և Բել», «Արա Գեղեցիկ և Շամիրամ», «Տիգրան և Աժդահակ» ներկայացրել է չափածո գրաբարով, ապա չափածո աշխարհաբարով՝ սեփական թարգմանությամբ: Նույն ձևով նա ներկայացրել է Գրիգոր Նարեկացու հրաշք տաղերի իր թարգմանությունը՝ զուգահեռելով բնագրին: Ահա թե որքան գեղեցիկ է հնչում «Տաղ վարդավառին» նրա թարգմանությամբ.

Այն հովերից հյուսիսային  
Գոհար շուշանն ըմպեց գեփյուռ,  
Իսկ լեռներից հարավային  
Շուշանին ցող ցողվեց անուշ:

Լցվեց շուշանն անբիծ շողով,  
Շող ու շաղով, շար մարգարտով,  
Ծաղկունքն ամպից ցող ստացան.  
Ամպն արևից՝ և՛ շաղ, և՛ շող (Էջ 118):

Վերջին գիրքը, որն իր կենդանության ժամանակ Ա. Մնացականյանը լույս աշխարհ եկած տեսավ, Նաղաշ Հովնաթանի «Տաղերն» էին՝ հարստացված նոր բնագրերով: Դա մեծ կենսասեր տաղերգուի՝ Նաղաշ Հովնաթանի տաղերի երրորդ լրացված ու լիակատար ժողովածուն էր (1983): Մեծ գիտնականի մահվանից հետո լույս են տեսել երկու նոր գրքերը՝ «Հայրեններ» (1995) և «Գիրք գրված փշալարի ճանկերում» (1997):

«Հայրեններ» ստվար հատորը (1095 էջ) տպագրվել է Մաշտոցի անվան Մատենադարանի տնօրեն Սեն Արևշատյանի անմիջական նախաձեռնությամբ, և հենց նա էլ գրքի պատասխանատու խմբագիրն է: «Հայրենների» վերջնական տեսքը ապահովել է Ա. Մնացականյանի սիրելի սան Արմինե Քոչկերյանը: Գիրքը հայ միջնադարյան հայրենների առաջին լիակատար ժողովածուն է, որով գիտականորեն ավարտին են հասցվում նշանավոր բանասերներ Մանուկ Աբեղյանի ու Արշակ Չոպանյանի առաջարկած տեսակետները հայրենների ծագման և դրանց հեղինակների վերաբերյալ: Հետազոտությունը վերստին հավաստում է, թե որքան խորքով գիտեր Ա. Մնացականյանը հայ միջնադարյան բանաստեղծությունը:

Եզակի միջնադարագետը գրել է նաև գիտական բազմաթիվ հոդվածներ, հանդես եկել միջազգային գիտաժողովներում: Այսպես, օրինակ, նա առաջինն է տպագրել X–XI դարերի նշանավոր մատենագիր Վարդան Անեցու «Վասն կառացն աստուածութեան» ներբողը՝ համապատասխան մեկնաբանություններով: Տպավորիչ է նրա խոսքը՝ գրված Գրիգոր Խանջյանի «Վարդանանք» գորելենի նկարչական առանձին հատվածները պատկերող այբովի առիթով. «Զինվորյալ են Հայոց մտքի ու ոգու բոլոր ժամանակների Մեծերը, գոյատևման ու հայապահպանության բոլոր

զինապարտները՝ եղեգնածին Վահագնից մինչև Կոմիտաս ու Վարուժան, Եղիշե Զարենց ու Պարույր Սևակ»:

Ա. Մնացականյանը նաև բանաստեղծ էր և ԽՍՀՄ գրողների միության անդամ էր 1940-ից: Տպագրել է բանաստեղծական երկու ժողովածու՝ «Պատերազմ և հայրենիք» (1942) ու «Բանաստեղծություններ» (1947):

Նրա վերջին՝ շատ տպավորիչ ու մարդու ներաշխարհը փոթորկող գիրքը («Գիրք գրված փշալարի ճանկերում») գրվել է համակենտրոնացման ճամբարում և երկար տարիներ պահվում էր լուսահողի Վազգեն Ա կաթողիկոսի մոտ: Այն ունի երկու փոքրիկ առաջաբան՝ 1) «Ձեռագիր մատյանի ողիսականը»՝ հեղինակ Երվանդ Պետրոսյան և 2) «Հայրենների ժառանգորդի վաստակը»՝ հեղինակ Բագրատ Ուլուրաբյան: Գիրքը բաղկացած է արձակ և չափածո հատվածներից: Նրանում եղած գեղարվեստական գործերը մեծ մասամբ գրվել են 1943-ի ամռանն ու աշնանը՝ Ռուսիայի Տիմիշոարա համակենտրոնացման ճամբարում: Զարմանալի լույս կա այս գրքում. չնայած հեղինակն ապրել է սովի, գրտի, բռնության, ամենօրյա մեռնողների շարքերում, սակայն Երևանի, Մատենադարանի, Ոսկեվազ գյուղի, սիրելի կնոջ, քույրերի, մոր և նորածին որդու կերպարները զգացել է ամեն պահի, երազել ու հավաստացել, թե հանդիպելու է նրանց: Ահա գերի զինվորի հարցադրումը.

Մի՞ թե աշխարհում դեռ կա՝ անկողին,  
Դեռ կա լի սեղան, կա՛ն սենյակներ տաք.  
Մի՞ թե չեն պառկում բոլորն էլ հողին՝  
Մեզ պես սովատանջ ու բաց երկնի տակ (էջ 126):

Հայրենիքը Ասատուր Մնացականյանի համար էլ, ինչպես Համո Սահյանի «Նաիրյան դալար բարդի» քերթվածում, նույնանում է բարդի ծառի հետ: Նա երագում է, որ ոչ մի ռուսի իր հայրենիքում չընկնի ու այնպես լինի, որ քամին դրա ընթացքը փոխի, և այն պայթի իր վշտոտ հոգում.

Իմ սրտում պայթի, որպեսզի հանկարծ  
Չպայթես կտրին ձեռագրատան.  
Եվ ո՛չ մի, ո՛չ մի, ո՛չ մի դաժան կայծ  
Չհուզե անդորրն այդ վեհ սրբության (էջ 148):

Նախախնամությունը պահպանեց Ասատուր Մնացականյանի կյանքը, և նա իր պաշտելի Մատենադարանում տքնաջան ու եռանդով ստեղծեց գիտական իր մեծարժեք ժառանգությունը, թողեց փոխարինողներ, որոնք սրբորեն պահում են սիրելի ուսուցչի պատգամները: